ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073-152

0231-6-09-36

03 սեպտեմբերի 2012թ. գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի օգոստոս ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

7908-12
07 09 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

14 օգոստոսի 2012 թ. Թիվ 13

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և 2012 թվականի օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 8-ը Հայաստանի Հանրապետությունում կայանալիք զինավարժության կապակցությամբ Երևան-Արմավիր մայրուղուն հարակից Արշալույս համայնքի վարչական սահմաններում գտնվող տարածքում սանիտարական մաքրման աշխատանքների կատարման համար.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ձ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 14
գ. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

01 օգոստոսի 2012թ. Թիվ 23

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 7 փողոցի 39 հասցեում գտնվող Մլազմ Սայիդի Խալիլյանի/ծնված 1957թ./, Սաբրո Խալիլի Ռուստյանի/ծնված 1961թ./, Ելենա Մլազմի Խալիլյանի /ծնված 1982թ./, Անահիտ Մլազմի Խալիլյանի/ծնված 1983թ./, Շերազ Մլազմի Խալիլյանի/ծնված 1985թ./, Ազիզ Մլազմի Խալիլյանի /ծնված 1990թ./ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը կից զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 901.0 քմ հողամասի և հողամասի վրա գտնվող 214,8 քմ շենք-շինությունների նկատմամբ, որը կառուցվել է 1988թվականին:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի ստորաբաժանմանը գրանցել Մլազմ Սայիդի Խալիլյանի/ծնված 1957թ./, Սաբրո Խալիլի Ռուստյանի/ծնված 1961թ./, Ելենա Մլազմի Խալիլյանի /ծնված 1982թ./, Անահիտ Մլազմի Խալիլյանի/ծնված 1983թ./, Շերազ Մլազմի Խալիլյանի/ծնված 1985թ./, Ազիզ Մլազմի Խալիլյանի /ծնված 1990թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 1
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

09 օգոստոսի 2012թ. Թիվ 24

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի երկրորդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի ապրիլի 17-ի N470-Ն և հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով Սանասար Հայրիկի Մնացականյանի 2012 թվականի օգոստոսի 6-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել օրինական Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչ Սանասար Հայրիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Արշալույս համայնքի 19 փողոցի 7 անասնիբ? հողամասի վրա գտնվող 97.5.0 քմ մակերեսով ինքնակամ շինության սեփականության իրավունքը:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է 126750 /հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր հիսուն/ 22. դրամ:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի **օգոստոսի 9**
ք. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոսի 2012թ. Թիվ 25

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոտվածով սահմանված հողամասերի ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 7 փողոցի 39 հասցեում գտնվող Մլազմ Սայիդի Խալիլյանի/ծնված 13.11.1957թ./, Սաբրո Խալիլի ՈՒսոյանի/ծնված 28.06.1961թ./, Ելենա Մլազմի Խալիլյանի /ծնված 09.12.1982թ./, Անահիտ Մլազմի Խալիլյանի/ծնված 11.06.1983թ./, Շերազ Մլազմի Խալիլյանի/ծնված 16.05.1985թ./, Ազիզ Մլազմի Խալիլյանի /ծնված 19.07.1990թ./ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը կից զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 901.0 քմ հողամասի և հողամասի վրա գտնվող 214,8 քմ շենք-շինությունների նկատմամբ, որը կառուցվել է 1988թվականին:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի ստորաբաժանմանը գրանցել Մլազմ Սայիդի Խալիլյանի/ծնված 13.11.1957թ./, Սաբրո Խալիլի ՈՒսոյանի/ծնված 28.06.1961թ./, Ելենա Մլազմի Խալիլյանի /ծնված 09.12.1982թ./, Անահիտ Մլազմի Խալիլյանի/ծնված 11.06.1983թ./, Շերազ Մլազմի Խալիլյանի/ծնված 16.05.1985թ./, Ազիզ Մլազմի Խալիլյանի /ծնված 19.07.1990թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Ուժը կորցրած ճանաչել Արշալույս համայնքի ղեկավարի 2012 թվականի օգոստոսի 1-ի թիվ 23 որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 15
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոսի 2012թ. Թիվ 26

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ լիազորված անձ Սայադ Միրսադինի Խալիլյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 7 փողոցի 39 հասցեում գտնվող բնակելի տանը և օժանդակ շինություններին կից 1988 թվականին կառուցված 214.8 քառակուսի շենք-շինությունը, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը՝ 901 քառակուսի մետր, համայնքի բնակիչ Մլազմ Սայիդի Խալիլյանի/ծնված 13.11.1957թ./, Սաբրո Խալիլի Ռիսոյանի/ծնված 28.06.1961թ./, Ելենա Մլազմի Խալիլյանի /ծնված 09.12.1982թ./, Անահիտ Մլազմի Խալիլյանի/ծնված 11.06.1983թ./, Շերազ Մլազմի Խալիլյանի/ծնված 16.05.1985թ./, Ազիզ Մլազմի Խալիլյանի /ծնված 19.07.1990թ./ որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ձ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 15
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոսի 2012թ. Թիվ 27

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի 2012 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/07.1/2363-12 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի հունիսի 23-ի << <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման>> հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին>> թիվ 34 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետում <<մասնակիցներին >> բառը փոխարինել <<մրցույթի մասնակիցներին (այսուհետ՝ մասնակիցներ)>> բառերով.

2) N1 հավելվածի 10-րդ կետի <<ե>> ենթակետում <<մրցույթի մասնակիցների (այսուհետ՝ մասնակիցներ)>> բառերը փոխարինել <<մասնակիցների>> բառով.

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 6-րդ կետում <<մրցույթի>> բառը փոխարինել <<ատեստավորման>> բառով.

4) N 2 հավելվածի 8-րդ և 15-րդ կետի<<գ>> ենթակետում <<մասնակիցներին>> բառը փոխարինել <<ատեստավորվող համայնքային ծառայողներին>> բառերով.

5) N 2 հավելվածի 10-րդ կետի <<ե>> և <<ի>> ենթակետերը ուժը կորցրած ճանաչել.

6) N 2 հավելվածի 16-րդ կետում <<համայնքի ղեկավարին եզրակացություն տալու պահից>> բառերը փոխարինել <<ատեստավորման արդյունքները հրապարակվելու պահից>> բառերով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 15
գ. Արշալույս